Արձանագրություն N 2

«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար «Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր 13 փետրվար 2023թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Ռ.Եղիազարյան՝ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
անդամներ՝ Գ.Հակոբյան՝ համայնքի ղեկավարի խորհրդական,
Գ.Հակոբյան՝ համակարգչային ծրագրերի և տեխնիկայի սպասարկող,
Ս.Գրիգորյան՝ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ,
Գ.Գևորգյան՝ համայնքի ղեկավարի տեղակալ
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. Տեղեկություններ «ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով, հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2023 թվականի փետրվարի 13-ին, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարան՝ ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում: Գնման առարկա է հանդիսանում **«Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ»-ի ձեռքբերումը**:

2. «ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների և ներկայացված գնային առաջարկների մասին

2.1 Գնման ընթացակարգին հայտ ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

h/h	*Մասնակիցների անվանումը*	*Գործունեության հասցեն և էլ.փոստի հասցեն*
1.	«Հազարաշեն» ՍՊԸ	Ք.Երևան,Պ.Սևակի 1, hazarashen@mail.ru
2.	«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ	Արարատի մարզ,գ.Ոստան,Երևանյան 13, architools@mail.ru

2.2 **«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/2»** ծածկագրով ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ դրամ

Չափաբաժնի անվանումը և գնման գինը	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
1. *Ծաղկաձոր համայնքի ենթակայության շենքերում տեսախցիկների տեղադրման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության անցկացման աշխատանքներ - 500000 ՀՀ դրամ*	«Հազարաշեն» ՍՊԸ	485 000	0	**485 000 /չորս հարյուր ութսունհինգ հազար/**
	«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ	1 200 000	0	**1 200 000 /մեկ միլիոն երկու հարյուր հազար/**

2.Ծաղկաձոր քաղաքի բազմաբնակարան շենքերի մուտքերի դռների փոխարինման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության անցկացման աշխատանքներ – 300000 ՀՀ դրամ	«Հազարաշեն» ՍՊԸ	285 000	0	**285 000 /երկու հարյուր ութսունհինգ հազար/**
3.Մեղրաձոր բնակավայրի խմելու ջրի խողովակաշարերի փոխարինման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության անցկացման աշխատանքներ-300000 ՀՀ դրամ	«Հազարաշեն» ՍՊԸ	285 000	0	**285 000 /երկու հարյուր ութսունհինգ հազար/**

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

Ընդունել ի գիտություն, որ

3.1 «Հազարաշեն» ՍՊԸ-ի և «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին: **«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ի** կողմից չի ներկայացվել Աշխատանքային ռեսուրսներ-ի մասով տեղեկատվություն:

4. Տվյալներ հրավերով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների մասին

4.1 Ոչ գնային չափանիշները գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատվել են հետևյալ կարգով.

Ոչ գնային չափանիշներ	Գնահատման չափանիշը		
Մասնակիցների անվանումները	Մասնագիտական փորձառություն	Աշխատանքային ռեսուրսներ	Ընդամենը
«Հազարաշեն» ՍՊԸ	40	30	70
«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ	40	0	40

4.2 Գնային պայմանը գնահատվել է հետևյալ կարգով **/համաձայն հրավերով սահմանված բանաձևի/**.

Մասնակիցների անվանումները	Գնային պայմանի գնահատականը
«Հազարաշեն» ՍՊԸ	30
«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ	12

4.3 Բավարար գնահատված յուրաքանչյուր մասնակցին տրվող գնահատականը գնահատվել է հետևյալ կարգով **/համաձայն հրավերով սահմանված բանաձևի/**.

Մասնակիցների անվանումները	Մասնակիցներին տրված ընդհանուր գնահատականը (ՄԳ)
«Հազարաշեն» ՍՊԸ	42
«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ	20

5.«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/2» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

5.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ **«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/2»** ծածկագրով ընթացակարգի **1,2,3 չափաբաժինների** մասով ընտրված մասնակից է ճանաչվել՝ **<<Հազարաշեն>> ՍՊԸ**-ն՝ որպես հրավերի պահանջները բավարարող, ամենաբարձր գնահատական (ՄԳ) ստացած և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

6.«ԾՔ-ԳՀԽԱՇՁԲ-23/2»ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստի արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

6.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

6.2 Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է 1-ին չափաբաժնի մասով <<Գնումների մասին>> օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի /10 օրացուցային օր/ ավարտից հետո, իսկ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

6.3 Անգործության ժամկետի ավարտից հետո՝ պայմանագրի կնքման նպատակով, ընթացակարգի ընտրված/հաղթող/ մասնակցին ծանուցել՝ ներկայացնելով կնքվելիք պայմանագրի նախագիծը և առաջարկել **5 աշխատանքային օրվա ընթացքում** ներկայացնել **պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 տոկոսի չափով: Պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացվում են՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Բանկային երաշխիքի ձևով ապահովումները ներկայացվելու դեպքում մասնակցին տրամադրվելու է 10 աշխատանքային օր:**

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը	**Ստորագրությունը**
Նախագահ՝ Ռ.Եղիազարյան	
Անդամներ՝ Գարիկ Գևորգյան	
Գուրգեն Հակոբյան	
Սամվել Գրիգորյան	
Գոռ Հակոբյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	